



«Այբ» ավագ դպրոց

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Քննաշրջան՝ 2020 թ., ապրիլ
Տևողություն՝ 1 ժամ 15 րոպե

«Այբ» ավագ դպրոց

Հավելյալ նյութ՝ Պատասխանների գրքույկ

ՈՒՇԱԴԻՐ ԿԱՐԴԱԼ ԱՅՍ ՈՒՂԵՑՈՒՅՑԸ

Անհրաժեշտ է հետևել *Պատասխանների գրքույկի* կազմին գրված ցուցումներին:

Գրել մուգ կապույտ կամ սև գրիչով:

Պետք է պատասխանել **բոլոր** հարցերին:

Քննության վերջում բոլոր թղթերը հավաքել և հանձնել մեկ տրցակով:

Յուրաքանչյուր հարցի հնարավոր առավելագույն միավորը նշված է հարցի վերջում աջ կողմում:

Հարցերի միավորների ընդհանուր քանակը **32** է:

Այս փաստաթուղթը բաղկացած է **8** տպագիր էջից:

Հայոց պատմություն

Ուշադրություն. առանց շտապելու կարդացե՛ք և ուսումնասիրե՛ք բերված աղբյուրները: Պատասխանե՛ք հարցերին՝ հիմնավորելով տրված աղբյուրներում առկա վկայություններով:*

Առաջադրանք 1 (9 միավոր)

Ստորև տրված է հատված I դարի հռոմեական պատմիչ Տակիտոսի աշխատությունից:

Ներոնը նրան Հռոմ առաջնորդեց և խույրը դրեց գլխին: Ամբողջ քաղաքը զարդարված էր լույսերով և պսակներով, և ամենուրեք երևում էին մարդկանց մեծ բազմություններ, առանձնապես բազմամարդ էր ֆորումը: Կենտրոնում ըստ հասարակության մեջ իրենց զբաղեցրած դիրքի՝ կանգնած էին քաղաքացիները՝ սպիտակագետտ և դափնեզարդ, իսկ մնացած բոլոր տեղերում՝ տոնական հանդերձավորված զինվորները, որոնց զենքերն ու դրոշները փայլատակում էին: Տրդատը խոսեց այսպես. «Ես, ո՛վ վեհապետ, Արշակի հետնորդն եմ, Վաղարշ և Բակուր թագավորների եղբայրը, իսկ քո՛ ծառան: Ու եկել եմ ես դեպի քեզ՝ իմ աստծուն, քանզի դու ես իմ բախտը»: Իսկ Ներոնը նրան այսպես պատասխանեց. «Ես քեզ դարձնում եմ Հայաստանի թագավոր, որպեսզի թե՛ դու և թե՛ եղբայրներդ հասկանաք, թե ես կարող եմ թագավորություններ և՛ վերցնել, և՛ պարգևել»: Եվ երբ Տրդատին նստեցրին նրա ոտքերի առաջ, նա թագը դրեց նրա գլխին:

Հարց Ա

Ե՞րբ է գահակալել հատվածում հիշատակվող արքան, և ո՞ր արքայատոհմն է նա հիմնադրել: Նշանավոր ո՞ր ճակատամարտից և կնքված պայմանագրից հետո էր նա մեկնել Հռոմ թագադրվելու:

Հատվածում հիշատակված է Տրդատ I Արշակունին (66-88 թթ.), որը հիմնադրել է Հայ Արշակունիների արքայատոհմը: Նրա օրինական գահակալությունը հնարավոր էր դարձել 62 թ. տեղի ունեցած Հռանդեայի ճակատամարտի շնորհիվ, որտեղ հայ-պարթևական զորքերը ծանր պարտության էին մատնել հռոմեական զորքին՝ ստիպելով անցնել նաև երեք նիզակից կազմված անարգանքի լծի տակով: 64 թ. նույն Հռանդեայում կնքված պարթևա-հռոմեական պայմանագրով հռոմեական կայսր Ներոնը համաձայնեց ճանաչել պարթև արքայազն Տրդատին հայոց թագավոր միայն այն դեպքում, եթե նա անձամբ ներկայանա Հռոմ և թագ ստանա կայսրից:

Հարց Բ

Ըստ Տակիտոսի՝ ինչու՞ էր Ներոնի համար կարևոր հայոց արքայի թագադրությունը Հռոմում:

Տրդատի թագադրությունը Հռոմում փոխզիջումային տարբերակ էր, որով Հռոմը փորձում էր վերականգնել իր հեղինակությունը Հռանդեայի ճակատամարտում կրած պարտությունից

* Աղբյուրները, ըստ անհրաժեշտության, պարզեցվել են և արտահայտելով ճշգրիտ իմաստը՝ կարող են տարբերվել բնօրինակից:

հետո: Պատմիչը նկարագրում է տոնական Հռոմը, որտեղ բազմամարդ տոնակատարություն էր կազմակերպվել հայոց արքայի թագադրության համար: Ներոնի համար կարևոր էր ցույց տալ իր գերակայությունը հայկական գահի նկատմամբ: Պատահական չէր, որ նա շեշտում էր, թե ինքը կարող է թագավորություններ տալ ու վերցնել: Իսկ Տրդատը ցույց էր տալիս իր հնազանդությունը՝ Ներոնին աստված անվանելով և ծնկելով նրա առջև: Հետո հայոց գահի համար սահմանվեց այն սկզբունքը, որ պարթևները Արշակունիների տոհմից նշանակում էին գահի թեկնածուին, իսկ Հռոմը հաստատում էր նրան հայոց գահին, այսինքն՝ Արշակունիների գահակալությունը ժառանգականության սկզբունքով չէր:

Առաջադրանք 2 (10 միավոր)

Աղբյուր Ա

Ստորև տրված է հատված 1956 թ. Խորհրդային Միության առաջնորդ Նիկիտա Խրուշչովի ելույթից:


Ստալինի մահից հետո Կոմունիստական կուսակցության Կենտրոնական կոմիտեն սկսել է իրականացնել մի քաղաքականություն՝ հստակ և համակողմանիորեն բացատրելու, որ անթույլատրելի և մարքսիզմ-լենինիզմի ոգուն խորթ է մեկ անձին բարձրացնել, նրան վերածել գերմարդու, որը գերբնական կարողություններ ունի, ինչպես մի աստված: Այդպիսի մարդը, ենթադրվում է, գիտի ամեն ինչ, տեսնում է ամեն ինչ, մտածում է բոլորի համար, կարող է անել ցանկացած բան, անսխալական է իր վարքագծում:

Այսպիսի հավատ է արմատավորվել մեր մեջ տարիներ շարունակ մեկ անձի և մասնավորապես՝ Ստալինի մասին:

Այդ տարիներին զանգվածային բռնաճնշումներ են կիրառվել, որոնք շոշափելի ոչնչի վրա հիմնված չեն եղել և որոնց հետևանքով կուսակցությունը կադրային ծանր կորուստներ է ունեցել: Այդ դեպքերի մեծ մասը այժմ վերանայվում է, և նրանց մեծ մասը արդեն չեղարկվել է, քանի որ դրանք կեղծված էին և անհիմն:

Աղբյուր Բ

Ստորև տրված ծաղրանկարը հրատարակվել է 1962 թ. բրիտանական թերթում և վերնագրված է՝ «Հալչում ենք»:



Հարց Ա

Ո՞ր դարաշրջանի սկիզբը նշանավորվեց Նիկիտա Խրուշչովի ելույթով: Ինչպե՞ս էր դրսևորվում նոր դարաշրջանը Խորհրդային Հայաստանում:

Ստալինի մահվանից հետո իշխանության եկած Լոր ամառանոցը՝ Նիկիտա Խրուշչովը սկիզբ դրեց ձևավորված ժամանակաշրջանին: Ի տարբերություն Ստալինի դարաշրջանի, երբ բռնաճնշումներն ու սպառնալիքները սովորական երևույթ էին, Խրուշչովի օրոք սկսվեց որոշակի ազատականացում: Ազատ արձակվեցին անհիմն մեղադրված անձինք, արդարացվեցին նախկինում որպես ժողովրդի թշնամի գնդակահարվածներից շատերը:

Հայաստանում ձևավորվեց նաև ազգային կարևոր նշանակություն: Այդ շրջանում սկսվեց ազգային զարթոնք: Առաջին անգամ բարձրացվեցին ցեղասպանության ճանաչման հարցը: 1965 թ. անգամ կազմակերպվեց բազմահազարանոց ցույց հենց Երևանում: Սկսեցին ազատ գործել այլախոհական շարժումները: Թույլատրվեց խոսքի որոշակի ազատություն: Արդյունքում բարձրացան Հայաստանի անկախացման, Լեռնային Ղարաբաղը Հայաստանին միացնելու հարցերը:

Հարց Բ

Օգտագործելով աղբյուրների վկայությունները և ձեր գիտելիքները՝ Հայաստանի օրինակով բացատրե՛ք, թե ինչ խնդիրներ էին առաջացել Ստալինի օրոք:

Ինչպես Խրուշչովը նշում է իր ելույթում, արմատավորվել էր Ստալինի անձի պաշտամունք, որի հետևանքով խորհրդային ժողովրդի բոլոր նվաճումները վերագրվում էին միայն ամառանոցին: Ստալինը սկսել էր ժողովրդի թշնամիների որս, որը վերածվեց բռնաճնշումների մեծ ալիքի (հատկապես 1937-1938 թթ.): Կոմկուսը հաստատել էր մենիշխանություն՝ արգելելով մնացյալ բոլոր կուսակցությունների գործունեությունը. սա Լենինի ժամանակաշրջանի ժառանգությունն էր:

Բռնաճնշումների հետևանքով ձերբակալվեցին ու սպանվեցին Հայաստանի քաղաքական, հոգևոր ու մշակութային բազմաթիվ գործիչներ: Սպանվեց ՀԿԿ Կոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Ադասի Խանջյանը, պատուհանից դուրս նետվեց/նետեցին Սահակ Տեր-Գաբրիելյանին: Ձերբակալվել էին նաև գրողներից Եղիշե Չարենցը, Ակսել Բակունցը և այլք: Նրանց ճնշող մեծամասնությունը արդարացվեց Ստալինի մահից հետո՝ ձևավորված շրջանում, շատերը՝ հետմահու:

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ 3 (6 միավոր)

Աղբյուր Ա

Ծաղրանկարը տպագրվել է 1780-ականներին և մեկնաբանում է այն ժամանակ ֆրանսիայում տիրող հասարակության կառուցվածք՝ իր երեք դասերով:



Խորագիր՝ Հուսանք, որ շուտով սա կավարտվի:

Աղբյուր Բ

Ստորև մեջբերված է հատված նշանավոր ֆրանսիացի լուսավորական գործիչ Ժան-ժակ Ռուսոյի գրքույկից, որը 1775 թ. արգելվել է ֆրանսիական կառավարության կողմից:

Ժողովուրդը պետք է ունենա իշխանություն: Մարդը ծնվում է ազատ: Ոչ ոք չունի ի ծնե արտոնություն ուրիշների նկատմամբ, և իշխանությունը ոչ ոքի չի տալիս նման իրավունք: Օրենքներ մշակելու իրավունքը պատկանում է ժողովրդին և միայն ժողովրդին:

Հարց Ա

Բացատրիր՝ ինչ է փորձել պատկերել ծաղրանկարիչը և ինչ նպատակով:

Ծաղրանկարը տպագրվել է 1789 թ.Մեծ հեղափոխությունից մի քանի տարի առաջ՝ 1780-ականներին նախահեղափոխական ֆրանսիայում: Ծաղրանկարիչը փորձել է այս կերպ

հասարակությանն ավելի պատկերավոր ներկայացնել նրանց դրությունը՝ ընդգծելով երկրում տիրող հասարակական և քաղաքական անարդարությունը՝ հավանաբար նպատակ ունենալով նրանց ուղքի հանել ընդդեմ իշխող վերնախավի:

Աշակերտը պետք է փորձի ծաղրանկարում պատկերված մարդկանց նույնացնել նախահեղափոխական Ֆրանսիայի հասարակության երեք դասերի համապատասխան ներկայացուցիչներին՝ ներկայացնելով նրանց իրավունքները, պարտականությունները և արտոնությունները: Օրինակ՝ **Երրորդ դաս** (*ձեռներեցներ, բազմամիլիոն գյուղացիություն, արհեստավորներ և այլք*), որի ներկայացուցիչը դժվարությամբ, ծանրության տակ ճկված և գերանդիի վրա հենված մեջքին տանում է արտոնյալ **առաջին** (*հոգևորականություն*) և **երկրորդ** (*ազնվականություն*) դասերի ներկայացուցիչներին: Գյուղացու ուղքերի տակ նկատվում են թռչուններ և նապաստակներ, որոնք ուտում են վերջինիս ստեղծած բարիքները: Այսինքն՝ այս դասն է գլխավոր բարիք ստեղծողը, որից օգվում են բոլորը, սակայն ամենաճնշվածն է:

Հարց Բ

Օգտագործե՛ք ձեր գիտելիքները և բոլոր աղբյուրների տեղեկությունները՝ բացատրելու համար Ֆրանսիական հեղափոխության պատճառները: Բացատրե՛ք երեք պատճառ:

Աշակերտը պետք է ծանոթ լինի Մեծ հեղափոխության **քաղաքական** (*բացարձակ միապետություն, «Մեզանից հետո՝ թեկուզ ջրհեղեղ», պետության կառավարման հարցում Երրորդ դասը որևէ մասնակցություն չուներ, Գլխավոր շտատներ չէին հրավիրվում*), **տնտեսական** (*ֆինանսական ճգնաժամ, բարձր հարկեր, մենաշնորհներ, աղքատություն*), **հասարակական** (*դասային արտոնություններ, հասարակական անարդարություն*) և **գաղափարական** (*լուսավորական գաղափարների տարածումը հասարակության շրջանում, այլ հաջող հեղափոխությունների ազդեցությունը՝ Անգլիական, Ամերիկյան*) պատճառներին, որոնցից, ըստ ցանկության, կարող է բացատրել ցանկացած երեքը:

Աղբյուր Ա

Մեքերված հատվածը կոմս Ֆրանց ֆոն Հարրախի հուշերից է: Նա ականատես է եղել Ավստրո-Հունգարիայի թագաժառանգ Ֆրանց Ֆերդինանդի սպանությանը: Կարդացե՛ք այն և պատասխանե՛ք տրված հարցերին՝ օգտագործելով ինչպես աղբյուրի տեղեկությունները, այնպես էլ թեմայի վերաբերյալ ձեր գիտելիքները:

Երբ մեքենան արագորեն շրջվեց, հանկարծակի Նորին գերագանցության բերանից արյան բարակ շիթ հոսեց: Երբ ես հանում էի թաշկինակս՝ արյունը մաքրելու համար, Դքսուհին, լաց լինելով, հարցրեց նրան. «Աստված իմ, ի՞նչ է պատահել քեզ հետ», - ապա սայթաքեց նստատեղից և պառկեց մեքենայի հատակին:

Ես պատկերացում չունեի, որ գնդակը նրան ևս դիպել է: Ապա լսվեց Նորին գերագանցության ձայնը. «Սոֆի՛, Սոֆի՛, մի՛ մահացիր, դու երեխաներին ողջ ես պետք»: Եվ երբ ես հարցրի թագաժառանգին՝ շա՛տ է ցավում, նա պատասխանեց. «Բան չկա»: Ապա կորցրեց գիտակցությունը:

Շուտով մեքենան հասավ նահանգապետի նստավայր: Երկու անգիտակից մարմինները տեղափոխվեցին շենք, որտեղ շուտով հաստատվեց նրանց մահը:

Փաստաթուղթ Բ

Ստորև 1912 թ. ամերիկյան հանդեսում տպագրված ծաղրանկար է, որը ներկայացնում է մի խումբ երկրների միջև հարաբերությունների շղթան:



Հարց Ա

Ե՞րբ է տեղի ունեցել Աղբյուր Ա-ում նկարագրված իրադարձությունը: Ի՞նչ կապ կարող եք տեսնել Աղբյուր Ա-ում և Բ-ում ներկայացված իրադրության միջև: Բացատրե՛ք ձեր պատասխանը՝ հիմնավորելով աղբյուրների տվյալներով և ձեր գիտելիքներով:

1914 թ. հունիսի 28–ին սերբ ազգայնական Գավրիլո Պրինցիպը Սարաևոյում սպանեց Ավստրո-Հունգարիայի թագաժառանգ Ֆրանց Ֆերդինանդին և նրա կնոջը, որից մեկ ամիս անց Ավստրո-Հունգարիան պատերազմ հայտարարեց Սերբիային: Երկկողմ այս հակամարտությունը, վերածվեց Առաջին համաշխարհային պատերազմի:

Այս երկու աղբյուրների միջոցով հնարավոր է բացատրել, թե ինչու՞ իրադրությունը այդպես զարգացավ: Ըստ ծաղրանկարի՝ դեռևս 1912 թ դրությամբ աշխարհում կար մեծ մտավախություն, որ Եվրոպայում ձևավորված «մի խումբ երկրների բարեկամությունը»՝ դաշինքների համակարգը, կարող է շղթայական վտանգավոր դրություն ստեղծել: Պետք էր միայն մի փոքր առիթ: Ծաղրանկարի հեղինակը շղթայի ակտիվացման հիմքում տեսնում/կանխատեսում էր Բալկաններում Ավստրո-Հունգարիայի և Սերբիայի սրված հարաբերությունները:

Հայտնի է, որ միջազգային ճգնաժամերից և ռազմական բախումների վտանգից պաշտպանվելու նպատակով Եվրոպայում ձևավորվել էին երկու հակադիր ռազմաքաղաքական դաշինքներ՝ *Եռյակ դաշինք* և *Անտանտ*:

Եռյակ դաշինքը ձևավորվեց Գերմանիայի գլխավորությամբ 1879-1882թթ.: Անդամներն էին Գերմանիան, Ավստրո-Հունգարիան և Իտալիան: Նրանց դաշինքն ուղղված էր Ֆրանսիայի, Մեծ Բրիտանիայի և Ռուսաստանի դեմ: Ի պատասխան՝ ստեղծվեց Եռյակ միությունը կամ Անտանտը: Նրա հիմքը դրվեց 1893 թ. Ֆրանս-ռուսական փոխօգնության պայմանագրով, ապա 1904 թ. Ֆրանս-բրիտանական համաձայնությամբ, որին 1907 թ. միացավ նաև ցարական Ռուսաստանը: Ռուսաստանի հովանավորության ներքո էր գտնվում նրա «սլավոն եղբայր» Սերբիան:

Եվ ահա այս համակարգի յուրաքանչյուր անդամ ուներ պարտավորություն իր դաշնակցի հանդեպ, և ցանկացած ճգնաժամ կարող էր ակտիվացնել այն: Տվյալ դեպքում Թագաժառանգի սպանությունը դարձավ նման առիթ և իրականացավ 1912 թ. ծաղրանկարի հեղինակի կանխատեսումը, ըստ որի՝ ավստրո-սերբական հակամարտության դեպքում Սերբիայի պաշտպանությամբ հանդես կգար Ռուսաստանը: Գերմանիան էլ տվյալ դեպքում չէր կարող միայնակ թողնել իր դաշնակից Ավստրո-Հունգարիային և պատերազմ կհայտարարեր Ռուսաստանին: Ֆրանսիան իր հերթին կաջակցեր իր դաշնակից Ռուսաստանին, եթե Գերմանիան նրա վրա հարձակվի: Եվ վերջում իր դաշնակցային պարտքը կշտապեր կատարել Մեծ Բրիտանիան:

Հարց Բ

Կա տեսակետ, որ Ֆրանց Ֆերդինանդի սպանությունը Առաջին աշխարհամարտի հիմնական պատճառն էր: Համաձայն եք այս տեսակետի հետ, թե՞ ոչ: Հիմնավորե՞ք պատասխանը փաստերով:

Պատասխանը կախված է աշակերտի անհատական կարծիքից և գնահատվելու է նրա՝ վկայությունների հետ աշխատելու հմտությունը՝ ինչպես կկարողանա իր գիտելիքները օգտագործելով՝ դիրքորոշումը հիմնավորող փաստարկված դատողություններ կատարել: